ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1638728
15-09-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *«ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ*
Հասցե՝ *ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ Փ., 47/13-1,*
directdemocracymonitoring@gmail.com : 37477343745

Գրությունը ուղարկվել է էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով՝ կազմակերպության կողմից առանձին կցված ֆայլով:

Կից՝ 1 ֆայլ

«Ուղղակի ժողովրդավարություն»
ժողովրդավարական ինստիտուտների
ամրապնդման ՀԿ

Հասցե՝ քաղաք Վանաձոր,
Տիգրան Մեծի *47/13-1*

Հեռ. *(+374) (98) 200-166*

DIRECT DEMOCRACY
For Consolidation Of Democratic Institutions NGO

''Direct democracy'' NGO for consolidation of democratic institutions

Address: Lori Region, Vanadzor, Tigran Mets 47/13-1

Tel. (+374) (98) 200-166

ԹԻՎ 01/172
15.09.2025թ.

ՀՀ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանին

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ

Հարգելի պարոն Մկրտչյան

Ձեզ ուղարկվել էր հարցում կապված Վանաձորի թիվ 4 մանկապարտեզի երկու եվրո պատուհանների, մեկ եվրո դռան, թիվ 4 մանկապարտեզի փայտե տնակի և Վանաձորի տիկնիկային թատրոնի ալյումինե պատուհանների վերաբերյալ, նշելով նաև դրանց առկայությունն ապացուցող լուսանկարների կարևորությունը: Ձեր կուղմից մեզ ուղղված պատասխանում երևում է համայնքի ղեկավարի պատասխանը, ըստ որի նշված է որ այդ գույքն առկա է, սակայն փաստող լուսանկարներ չկան: Ուստի պատասխանը չի կարող համարվել ամբողջական, քանի որ համայնքի ղեկավարի պնդումը, թե գույքն առկա է բավարար հիմք չէ, իսկ հիմքը հետևյալում է՝ թիվ 4 մանկապարտեզի և Տիկնիկային թատրոնի տնօրենները պետք է գույքի հանձնման արձանագրություն կազմեին, որով այդ գույքը պետք է հանձնեին շինարարական կազմակերպությանը, որում պետք է հիմնովին նշված լինեին հանձնվող գույքի բոլոր տվյալները, որը նաև ներառված է լինում գնումների գործընթացում ստորագրված պայմանագրի ծավալաթերթում: Շինարարական կազմակերպությունը արձանագրությամբ այդ գույքը հանձնում է քաղաքաշինության և ճարտարապետության բաժին, որն ընդունելուց հետո հանձնում է կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնին, վերջինս ստացված գույքը տանում է իր ենթակայությամբ գտնվող ՀՈԱԿ-ի տարածք, արձանագրությամբ հանձնում պահպանության, մինչև ավագանին որոշի դրա ճակատագիրը: Ուստի մեզ հետաքրքրում է, թե այդ փաստաթղթերի առկայությունը, թե իրական տվյալները այդ գույքի առկայության մասին: Լուսանկարների չտրամադրումը մեզ մոտ կասկած է առաջացնում այդ գույքի բացակայության մասին, ուստի նոր հարցմամբ խնդրում ենք տրամադրել

տեղեկատվություն համապատասխան փաստաթղթերով և դրանց առկայությունն ապացուցող լուսանկարներով հետևյալ համայնքային գույքի՝

Վանաձորի պատկերասրահի նախկին ալյումինե լուսամուտների,

Վանաձորի տիկնիկային թատրոնի նախկին ալյումինե լուսամուտների,

Վանաձորի Հալաբյան գնացող կամրջից հանված պողպատե հենասյուների,

Վանաձորի թիվ 4 մանկապարտեզի ապամոնտաժած տնակի,

Վանաձորի թիվ 8 մանկապարտեզի ապամոնտաժած տնակի,

Վանաձորի կենտրոնական լուսավորության ծրագրով ապամոնտաժված ալյումինեե լարերի և ապամոնտաժված լուսյարձակների վերաբերյալ:

Հարգանքով՝ «Ուղղակի ժողովրդավարություն»

ՀԿ նախագահ Գ. Քոթանջյան

15.09.2025թ.